



**«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում լրացումներ
և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ դիտարկումներ և
առաջարկներ**

ՀՀ արդարադատության նախարարությունն e-draft.am էլեկտրոնային հարթակում տեղադրել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Որպես Նախագծի հիմնավորում, ի թիվս այլնի, նշվում է Սահմանադրական դատարանի 2025 թվականի ապրիլի 16-ի թիվ ՍԴՈ-1776 որոշման (այսուհետ՝ ՍԴ որոշում) պահանջներին համապատասխանաեցման անհրաժեշտությունը, ինչպես նաև ինստիտուտի զարգացումը և կատարելագործումը:

Ստորև ներկայացնում ենք Նախագծի վերաբերյալ Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ (այսուհետ՝ Կազմակերպություն) դիտարկումները և առաջարկները, որոնք նաև բխում են Կազմակերպության կողմից ՀՀ հակակոռուպցիոն դատարանում իրականացվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերի մշտադիտարկման ամփոփումից:

Այսպես.

1. Նախագծով առաջարկվում է Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-ին մասով.

«3.1. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կամ 6-րդ կետերով նախատեսված հիմքերից որևէ մեկով իրավասու մարմինը սկսում է ուսումնասիրություն, եթե չի լրացել սույն օրենքի 5-րդ հոդվածի 1.1-րդ մասով սահմանված ժամկետը:»:

Իսկ Օրենքի 5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 1.1-ին մասով.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված հիմքերով իրավասու մարմինը կարող է ուսումնասիրություն սկսել պաշտոնատար անձի՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված վերջին պաշտոնը դադարեցնելուց հետո 10 տարվա ընթացքում:»:

Կարևորում ենք ուսումնասիրություն սկսելու համար վերջնաժամկետ սահմանելու նախաձեռնությունը, որով փորձ է արվում հասցեագրել և՛ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1776 որոշմամբ, և Իրավունքի միջոցով ժողովրդավարության Եվրոպական հանձնաժողովի



(այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով կողմից մատնանշված խնդիրը¹:

Այնուամենայնիվ, պաշտոնավարումից հետո 10 տարվա վերջնաժամկետ սահմանելը, առանց պատշաճ հիմնավորման, կարող է գնահատվել անհամաչափ: Պաշտոնատար անձանց վերաբերյալ համանման ընթացակարգեր ունեցող այլ պետություններում սահմանված տարբեր ժամկետներ՝ պաշտոնավարումից հետո: Օրինակ՝ Ֆիլիպիններում՝ 4 տարի, Ռումինիայում՝ 3 տարի² և այլն: Ավելին՝ գործող օրենսդրության համաձայն՝ պաշտոնատար անձը ներկայացնում է հայտարարագիր պաշտոնավարման ավարտից հետո, և հետագայում նրա հայտարարագիրը լրացվում է որպես ֆիզիկական անձ և հրապարակային չի լինի: Ուստի 10 տարվա ընթացքում նրա և փոխկապակցված անձանց գույքի նկատմամբ մշտադիտարկում իրականացնելը անհամաչափ միջամտություն կարող է լինել վերջիններիս իրավունքների մեջ, ինչպես նաև չափազանց ծանրաբեռնի պետական համակարգը:

Բացի այդ, պետք է նաև նշել, որ միջազգային չափանիշների, այլ պետությունների օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջնաժամկետ սահմանված է նաև հանցագործության հետ կապ ունեցող/ հանցավոր ճանապարհով ձեռքբերված գույքի բռնագանձման դեպքում:

Գործող կարգավորումների համաձայն՝ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերի առնչությամբ մինչդասական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, իսկ սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի առնչությամբ համապատասխան միջոցառումներն իրականացրած մարմինը պարտավոր են ուսումնասիրություն սկսելու հիմքերի առկայության մասին իրենց հայտնի դատնալու պահից՝ տասնօրյա ժամկետում, այդ մասին տեղեկացնել իրավասու մարմնին և փոխանցել այն բոլոր փաստաթղթերը և տվյալները, որոնք կարող են վերաբերել սույն օրենքով սահմանված ուսումնասիրություն սկսելու հիմքերին (հոդված 4): Հիմք ընդունելով ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ ուսումնասիրության նյութերով հայտնի հանգամանքները՝ իրավասու մարմինը որոշում է ուսումնասիրվող ժամանակահատվածը, որը ներառում է ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից մինչև ուսումնասիրության ավարտն ընկած ժամանակահատվածը, ինչպես նաև ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացումից առաջ ընկած ժամանակահատվածը,

¹ Armenia - Amicus curiae Brief for the Constitutional Court of Armenia on certain questions relating to the Law on the Forfeiture of Assets of Illicit Origin, adopted by the Venice Commission at its 133rd Plenary Session (Venice, 16-17 December 2022), Venice Commission, CDL-AD(2022)048, հասանելի է <https://www.coe.int/en/web/venice-commission/-/cdl-ad-2022-048-e>

² <https://integritate.eu/wp-content/uploads/2024/03/Law-176-2010.pdf>



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

որը չի կարող լինել ավելի երկար, քան ուսումնասիրությունն սկսելու մասին որոշման կայացմանը նախորդող տասը տարին, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի: Եթե ուսումնասիրության նյութերով ի հայտ են գալիս սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամանակահատվածից ավելի վաղ ձեռք բերված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ կասկածներ, և այդպիսի գույքի ձեռքբերմանն առնչվող ապացույցները պահպանված են, ապա իրավասու մարմինը կայացնում է որոշում՝ սահմանելով ուսումնասիրվող նոր ժամանակահատված, որը կարող է ներառել բացառապես 1991 թվականի սեպտեմբերի 21-ից հետո ընկած ժամանակահատվածը (հոդված 7):

Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ «Սահմանադրական դատարանը թիվ ՄԴՈ-1776 որոշմամբ արձանագրել է, որ Օրենքով գույքի բռնագանձման թույլատրելիության ժամանակային սահմանափակում չի նախատեսվում: Այս հարցը Սահմանադրական դատարանն ուղղակիորեն կապել է ուսումնասիրվող ժամանակահատվածը մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ը տարածելու՝ Դատախազության հայեցողական լիազորության հետ այն իմաստով, որ Օրենքով ուսումնասիրություն սկսելու վաղեմության որևէ ժամկետ նախատեսված չլինելու պայմաններում Օրենքի գործողության ընթացքում շարունակաբար երկարելու է բռնագանձման ենթակա գույքի ձեռքբերման և դրա առնչությամբ Օրենքով նախատեսված իրավական վարույթների միջև ընկած ժամանակահատվածը»:

Օրենքով սահմանված ժամկետները, որոնք վերաբերում են Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4 կետերի հիմքով նույնպես չեն համապատասխանում վերը նշված ՄԴ որոշմանը և միջազգային պրակտիկային: Գործող կարգավորումները բխում են այն մտտեցումից, որ ՀՀ գլխավոր դատախազությունը (այսուհետ՝ Իրավասու մարմին) ուսումնասիրությունը սկսում է և ուսումնասիրում է ուսումնասիրվող բոլոր անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց գույքը նախ ուսումնասիրությունը սկսելուն նախարդող 10 տարվա կտրվածքով՝ հետադարձ երկարացման հնարավորությամբ՝ անկախ հանցագործությունը կատարելու պահը կամ մեղադրական դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից: Նման պրակտիկա արձանագրվել է մինչև 2025թ. ապրիլ ամիսը՝ վերը նշված ՄԴ որոշման հրապարակումը: Այնինչ, ինչպես և հաստատվել է ՄԴ դիրքորոշմամբ, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-4 կետերի հիմքով սկսված ուսումնասիրությունները պետք է կատարվեն վերագրվող հանցանքի հետ ունենալու համատեքստում: Իսկ վերագրվող արարքը կարող է կատարված լինել ուսումնասիրությունը սկսելուց ավելի վաղ, քան 10 տարի: Նույն մտտեցումը բխում է վերաբերելի միջազգային



փաստաթղթերի վերլուծությունից³: Այսինքն՝ հստակ չէ, թե քրեական վարույթի շրջանակներում քննարկվող/ուսումնասիրվող գույքի ձեռքբերման ուսումնասիրությունը ինչպիսի ժամկետի վերաբերյալ կարող է կատարվել՝ վերագրելի արարքին նախորդող ժամանակահատվածի առումով:

Իր կարծիքներից մեկում, Վենետիկի Հանձնաժողովը հստակ նշել է, որ հանցավոր ճանապարհով գույք ձեռք բերելը և այդ գույքն օգտագործելը կանխարգելելու և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի Առաջին արձանագրությամբ երաշխավորված սեփականության իրավունքը պաշտպանելու անհրաժեշտությունը հավասարակշռելու տեսանկյունից երկու գործոն հատկապես կարևոր են՝

- 1) բռնագանձման ենթակա գույքի և հանցագործության միջև շոշափելի կապի առկայությունը, և
- 2) հարստության օրինականության հետադարձ ստուգման համար նախատեսված ժամանակային սահմանափակումները⁴:

Իրավական որոշակիության սկզբունքը պահանջում է, որ սահմանվեն հստակ վերջնաժամկետներ, որպեսզի հավասարակշռվի նաև պատասպանողի վրա դրվող՝ գույքի օրինական ծագումը հիմնավորելու ապացուցման բեռը և բացառվի սեփականության իրավունքի անհամաչափ միջամտությունը: Ըստ Վենետիկի Հանձնաժողովի՝ ԵՄ որոշ պետություններ օրենքով սահմանել են հանցավոր ճանապարհով ձեռքբերված գույքի բռնագանձման համար վերջնաժամկետը, որի ընթացքում այդ գույքը կարող է դիտարկվել որպես հանցավոր ճանապարհով ձեռքբերված: Օրինակ՝ Բելգիայում, Հունգարիայում, Պորտուգալիայում և Ռումինիայում այդ ժամկետը դատապարվելուն նախորդող 5 տարին է, Կիպրոսում և Իռլանդիայում՝ 6, Բուլղարիայում՝ 10; Չեխիայում, Լիտվայում և Լեհաստանում որպես հաշվարկային կետ նկատի են ունենում վերագրվող հանցագործությունը կատարելուն նախորդող 5 տարին⁵: Հակաստանի Օրենքի վերաբերյալ այս մասով Վենետիկի Հանձնաժողովը նշել է, որ դատապարտումից հետո նախատեսված չեն նաև քաղաքացիական

³ Տե՛ս ավելին՝ ՀՀ-ում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով դատական պրակտիկայի ամփոփում, էջ 7-15, <https://prwb.am/wp-content/uploads/2025/07/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-%D5%A1%D5%BA%D6%85%D6%80%D5%AB%D5%B6%D5%AB-%D5%AE%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B8%D6%82%D5%B6%D5%A5%D6%81%D5%B8%D5%B2-%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D6%84.pdf>

⁴ Venice Commission, CDL-AD(2024)024, Urgent Opinion on the Draft Amendments to the Law on Seizure and Confiscation of Material Benefit Derived from Criminal Activity, Montenegro, էջ 9.

[https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2024\)024-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2024)024-e)

⁵ Նույն տեղում, էջ 10.



բռնագանձման վարույթի հարուցման հստակ ժամկետները, ինչը համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքին⁶:

Այսինքն՝ 10 տարի հետադարձով ստուգման հնարավորության սահմանումը բոլոր հիմքերի համար տրամաբանական չէ, իսկ ընդհուպ մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ը երկարացումը նախատեսելը փաստացի խախտում է համաչափության սկզբունքը: Հիշեցնենք, որ Վենետիկի Հանձնաժողովը նույնպես նշել է, որ դատախազությանը տրված լիազորությունը սահմանված 10 տարի ժամկետից հետո գնալը, ընդհուպ մինչև 1991 թվական, բավականաչափ հստակեցված և արդարացված չէ, քանզի տպավորություն է ստեղծվում, որ բացառությունը հնարավոր է կիրառել ցանկացած դեպքում, երբ Իրավասու մարմնի կողմից որոշ ապացույց է հայտնաբերվում: Ժամկետի նման ընդլայնման դեպքում, հետադարձության հնարավորությունը ծայրահեղ երկար է ստացվում, ավելին՝ ժամանակի ընթացքում այդ ժամկետը ավելի է երկարելու⁷: Այս պնդումը բխում է ՄԻԵԴ կողմից արտահայտված դիրքորոշումից, համաձայն որի թեև օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ ծագած հարաբերությունների վրա դրա գործողությունը տարածելը ինքնին խնդրահարույց չէ, այնուամենայնիվ, չափազանց երկար ժամկետի սահմանումը «գույքի օրինական ծագումը ապացուցելու բեռը դարձնում է բարդ»⁸:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք վերանայել պաշտոնավարումից հետո ուսումնասիրությունից սկսելու ժամկետը՝ կրճատելով այն, ինչպես նաև քննարկել և լրացնել նախագիծը՝ քրեական վարույթի հիմքով սկսվող ուսումնասիրություննարի համատեքստում սահմանելով ժամկետներ:

2. Նախագծի 5-րդ հոդվածով առաջարկվում է Օրենքը լրացնել նոր 6.1-ին հոդվածով, որը կարգավորում է ուսումնասիրությունների միացման և առանձնացման ընթացակարգը: Սակայն հոդվածի ներկայիս ձևակերպումը բաց է թողնում Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նվազագույն արժեքային շեմի (50 մլն ՀՀ դրամ) պահպանման հարցը ուսումնասիրությունների միացման պարագայում:

Սահմանադրության 79-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքների փաստակազմը և իրավական հետևանքները բովանդակային տեսանկյունից պետք է այնքան որոշակի լինեն, որ հնարավորություն տան հիմնական իրավունքի կրողին և հասցեատիրոջը՝ դրսևորել

⁶ Venice Commission, CDL-AD(2022)048, կետ 55

⁷ Նույն տեղում, կետ 53

⁸ ECtHR, Todorov and Others v. Bulgaria, nos 50705/11 and 6 others, para. 202, 13 July 2021



համապատասխան վարքագիծ:

Թե՛ ներպետական, թե՛ միջազգային իրավական ակտերում և դատական պրակտիկայում տրվում է իրավական որոշակիության սահմանումը և ցանկացած իրավական ակտի՝ որոշակի լինելու պահանջը. «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՄԴՈ-630), «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն:

Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (...):» (ՄԴՈ-753), «Սահմանադրական դատարանն իր՝ 2015 թվականի հունիսի 9-ի ՄԴՈ-1213 որոշմամբ հայտնել է, որ « իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՈ-1475):

Սույն դրույթների վկայակոչումն ու մեկնաբանումը անհրաժեշտ է՝ հասկանալու համար, թե ինչքանով է խնդրո առարկա վիճարկվող նորմը որոշակի և արդյոք հնարավորություն տալիս է իրավահարաբերության մասնակիցներին՝ դրսևորել համապատասխան վարքագիծ:

Հաշվի առնելով, որ 50 մլն դրամի շեմը սահմանված է որպես նվազագույն շեմ նման գույքի բռնագանձման համար, փոքրարժեք գույքերի միավորումը մեկ վարույթում՝ շեմը հաղթահարելու նպատակով, կհակասի նշված սահմանափակմանը:

Այսպես, առանց նշված դրույթի հստակեցման առկա է ռիսկ, որ ուսումնասիրությունների միացումը կարող է օգտագործվել որպես գործիք՝ արհեստականորեն ապահովելու ապօրինի ծագում ունեցող գույքի անհրաժեշտ արժեքը, ինչը կհակասի հենց Օրենքի և Սահմանադրական դատարանի վերաբերելի դիրքորոշման տրամաբանությանը:

Ուստի անհրաժեշտ է 6.1-րդ հոդվածը լրացնել նոր մասով, որը կկանխի գույքի արժեքների արհեստական միավորումը:

Բացի այդ, նույն հոդվածի առաջին մասով նախատեսվում է, որ Իրավասու մարմինը կարող է կայացնել երկու կամ ավելի ուսումնասիրությունները միացնելու մասին որոշում, եթե ուսումնասիրությունների միջև առկա է փոխադարձ կապ:



Նախագծի 6.1-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվող փոխադարձ կապ ձևակերպումը չափազանց վերացական է և չի պարունակում այն նվազագույն չափանիշները, որոնց առկայության դեպքում միայն ուսումնասիրությունների միացումը կլինի իրավաչափ: Առանց հստակեցման, գործնականում հնարավոր է իրավիճակ, երբ իրար միացվեն ուսումնասիրություններ, որոնք ունեն տարբեր փաստական հիմքեր, տարբեր գույքային միավորներ և տարբեր ծագումնաբանություն՝ հիմնվելով բացառապես սուբյեկտիվ գործոնների (օրինակ՝ գուտ ազգակցական կապի) վրա:

Ուստի անհրաժեշտ է հստակեցնել նաև փոխադարձ կապ արտահայտության բովանդակությունը՝ այն կապելով գույքի ձեռքբերման աղբյուրի, միևնույն հանցավոր գործունեության կամ միևնույն փաստական հանգամանքների հետ (որոնք բխում են Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման օրենքի նպատակներից):

3. Նախագծի 6-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 11-րդ հոդվածում կատարել փոփոխություն, ըստ որի՝ նույն հոդվածի 3-րդ մասում նշված ժամկետում հայցվող տեղեկատվությունը չտրամադրվելու դեպքում իրավասու մարմինը կարող է ապացույց պահանջելու դիմում ներկայացնել առաջին ատյանի դատարան: Դատարանը ապացույց պահանջելու մասին դիմումը քննում է առանց նիստ հրավիրելու և որոշում է կայացնում դիմումն ստանալուց հետո՝ յոթնօրյա ժամկետում: Սա նշանակում է, որ այն սուբյեկտը (լինի դա ֆիզիկական անձ, թե կազմակերպություն), որին ուղղված է պահանջը, հնարավորություն չի ունենում դատարանին ներկայացնել իր առարկությունները կամ հիմնավորումները առ այն, թե ինչու տվյալ տեղեկատվությունը չի տրամադրվել (օրինակ՝ այն պարունակում է փաստաբանական գաղտնիք, անձնական տվյալներ կամ պարզապես առնչություն չունի ուսումնասիրության հետ):

Բացի այդ, ստացվում է՝ Դատարանը որոշումը կայացնում է բացառապես իրավասու մարմնի ներկայացրած հիմնավորումների հիման վրա:

Արդար դատաքննության տարբերից է կողմերի իրավունքը՝ ծանոթանալու մյուս կողմի ներկայացրած դիրքորոշումներին և հակադարձելու դրանց: Ինչպես նշվում է ՀՀ Սահմանադրական դատարանի 18 սեպտեմբերի 2018 թվականի ՍԴՈ-1426 որոշման մեջ. «...արդարացիության առանցքային հենքը կողմերի հավասարությունն է, որը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մոտեցումներում ամրագրվում է որպես «զենքերի հավասարությունը», իսկ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումներում՝ «մրցակցությունը», որոնք ընդհանուր առմամբ հանդիսանում են «արդարության բոլոր պահանջներից» առաջնայինը»:

Ուսումնասիրության փուլում ապացույց պահանջելը կարող է վերաբերել անձանց, ովքեր դեռևս չունեն պատասխանողի կարգավիճակ, սակայն նրանցից պահանջվող տվյալները կարող են պարունակել զգայուն տեղեկատվություն, տեղեկություններ վերջիններիս մասնավոր, ընտանեկան կյանքի վերաբերյալ, օրենքով պահպանվող գաղտնիք, կամ կարող է վերաբերել երրորդ անձանց



իրավունքներին և օրինական շահերին: Նրանց զրկելը նշված տեղեկատվությունը տրամադրելը մերժելը հիմնավորելու կամ նշված դիմումով արձագանքման հնարավորությունից՝ պետությանը տալիս է միակողմանի առավելություն այս խումբ գործեով՝ ստանալ ցանկացած սուբյեկտից ցանկացած տեղեկատվություն:

Ուստի անհրաժեշտ է վերանայել 11-րդ հոդվածի 5-րդ մասը և սահմանել հոդվածում նշված պահանջի հասցեատիրոջ լաված լինելու երաշխիքներ:

4. Նախագծի 11-րդ հոդվածով նախատեսվում է լրացնել Օրենքի 24-րդ հոդվածը՝ սահմանելով «ավելի հավանական է, քան ոչ» ապացուցման սկզբունքը, որը ըստ էության համարվում է համանման ընթացակարգերում կիրառելի և ընդունված չափանիշ⁹:

Ապօրինի ծագում ունեցող գույքի քաղաքացիական գործերի միջոցով բռնագանձման ընթացակարգերում կիրառվում է քրեական դատավարությանը բնորոշ կասկածից վեր չափանիշից ավելի ցածր ապացուցման բեռ, հիմնականում՝ հավանականությունների հավասարակշռում (Preponderance of the Evidence կամ Balance of probabilities) կամ ողջամիտ ենթադրությունը: Նշված չափանիշը ենթադրում է, որ ապացուցման ենթակա փաստը պետք է հիմնավորվի «ավելի հավանական է, քան ոչ, որ գույքը առնչություն ունի հանցավոր գործունեությանը»:

Օրենքը չի պարունակում կողմերի միջև ապացուցման պարտականության բաշխումը կարգավորող հատուկ նորմեր: Օրենքի համաձայն՝ նման պարագայում նշված հարցը պետք է կարգավորվի քաղաքացիական դատավարության օրենսգրքի կանոններով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով ապացուցման բեռի չափանիշ սահմանված չէ:

Վենետիկի հանձնաժողովը իր կարծիքում նշել է, որ գույքի ապօրինի ձեռք բերումը պետք է ապացուցվի ոչ թե քրեական վարույթին բնորոշ «ողջամիտ կասկածից վեր սկզբունքով», այլ քաղաքացիական ընթացակարգերին բնորոշ «հավանականության հավասարակշռման» սկզբունքով: Հանձնաժողովի գնահատմամբ՝ Հայաստանի ներպետական օրենսդրությունը բավարար հստակությամբ չի նախատեսում դատավարության ընթացքում ապացուցման բեռի չափանիշները¹⁰:

Դատական գործերը մշտադիտարկելիս արձանագրել ենք դեպքեր, երբ պատասխանող կողմը հստակ դիրքորոշում է հայտնել առ այն, որ ապացուցման պարտականության բաշխումը չպետք է իրականացվի հավանականությունների հավասարակշռման սկզբունքով: Պատասխանողը պնդել է, որ հավանականությունների հավասարակշռման սկզբունքը պատասխանողին, այլ ոչ թե հայցվորին տրված գործիք է՝ Դատարանին ողջամիտ փաստարկների միջոցով իր տեսակետը հիմնավորելու համար:

⁹ Venice Commission, CDL-AD(2022)048, կետ. 26.

¹⁰ Venice Commission, CDL-AD(2022)048, կետ 35.



Փաստացի նման կարգավորումը է միտված է օրենքով ամրագրել արդեն իսկ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի և Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից կիրառվող չափանիշը, որը թեև ընդունելի է համարվել և՛ Վենետիկյի հանձնաժողովի, և ՄԻԵԴ կողմից, այնուամենայնիվ, ամրագրված չէր ՀՀ օրենսդրությամբ:

Օրինակ՝ Հակակոռուպցիոն դատարանը հրապարակված վճիռներից մեկում նշել է. «Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման մոդելը ենթադրում է ապացուցման շեմի իջեցում: Ապացուցման շեմն այն չափանիշն է, որի հիման վրա գնահատվում են ապացույցները և հաստատվում (կամ հերքվում) են փաստերը: Ըստ այդմ, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթում գործում է ոչ թե հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշը, այլ՝ հավանականությունների հավասարակշռման (ապացույցների գերակշռման) չափանիշը: Ապացուցման այս ստանդարտը նշանակում է, որ մի կողմը ներկայացրել է իր պնդումների իրավացիությունը հաստատող թեկուզև մի փոքր ավելի ծանրակշիռ (սակայն ոչ բացարձակ համոզիչ) ապացույցներ, քան մյուս կողմը: Այլ կերպ ասած՝ ապացուցման այս չափանիշով որոշում կայացնելիս որևէ փաստի ապացուցվածության վերաբերյալ դատողությունների հիմքում Դատարանը դնում է «ավելի հավանական է, քան ոչ» սկզբունքը»¹¹:

Գործերից մեկով Վերաքննիչ դատարանն անդրադարձել է նաև *in rem* վարույթներին՝ նշելով, որ այդ տեսակի վարույթները հարուցվում են, երբ չկան բավարար ապացույցներ դատավճիռ կայացնելու համար, սակայն դրանք կարող են բավարար լինել ակտիվները ապօրինի դիտելու համար, որը պետք է իրականացվի հավանականությունների հավասարակշռման ապացուցողական չափանիշով¹²:

Հաշվի առնելով պրակտիկան և օրենսդրական բացի առկայությունը՝ ապացուցման չափանիշը հստակեցումը գնահատում ենք դրական:

¹¹ ՀԿԴ/0201/02/23, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040814418

¹² ՀԿԴ/0025/02/22, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=47850746040811545